I

(Տեղեկատվություն)

ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհրդի 2002թ. հունիսի 27-ի որոշումը ցկյանս ուսումնառության մասին

(2002/C 163/01)

Եվրամիության Խորհուրդը, նկատի ունենալով, որ՝

(1) Կրթությունն ու ուսուցումը անհրաժեշտ միջոցներ են սոցիալական համախմբվածության, ակտիվ քաղաքացիության, անձնական և մասնագիտական կայացման, հարմարվելու կարողության և աշխատանքի տեղավորման ունակության խթանման համար: Ցկյանս ուսումնառությունը նպաստում է եվրոպական քաղաքացիների ազատ շարժունակությանը և հնարավոր է դարձնում Եվրամիության երկրների ձգտումների և նպատակների իրականացումը (ինչպես օրինակ՝ դառնալ առավել բարեկեցիկ, մրցունակ, հանդուրժող և ժողովրդավարական): Այն պետք է անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու հնարավորություն տա բոլորին՝ գիտելիքի հասարակությանն ու աշխատաշուկային որպես ակտիվ քաղաքացիներ մասնակցելու համար:

(2) Սույն որոշման մեջ առաջադրված գործողությունը հարգում է Եվրամիության հիմնարար իրավունքների խարտիան և հատկապես հոդված 14-ը, որը հայտարարում է, որ յուրաքանչյուր ոք կրթություն, մասնագիտական և շարունակական ուսուցում ստանալու իրավունք ունի:

(3) 1996թ.՝ ցկյանս ուսումնառության եվրոպական տարվա վերջին, խորհուրդն ընդունեց եզրահանգումներ ցկյանս ուսումնառության ռազմավարության մասին՝ մշակելով մի շարք առանցքային սկզբունքներ ցկյանս ուսումնառության ռազմավարության համար:

(4) Լյուքսենբուրգի արտակարգ եվրոպական խորհուրդը, որը տեղի է ունեցել1997թ. նոյեմբերին, իր զբաղվածության ուղեցույցերում որպես գերակա խնդիրներ ներմուծել է աշխատանքի տեղավորման բարելավված ունակություն և հարմարվելու կարողություն, և ցկյանս ուսումնառությունն այսուհետև դարձել է Եվրոպական զբաղվածության ռազմավարության կարևորագույն նպատակ:

(5) Լիսաբոնի Եվրոպական Խորհուրդը, որը տեղի է ունեցել 2000թ. մարտին, Եվրամիության համար սահմանել է հետևյալ ռազմավարական նպատակը՝ դառնալ աշխարհի ամենադինամիկ գիտելիքահեն տնտեսությունը, որն ընդգրկում է առանցքային տարրեր, ինչպիսիք են՝ ցկյանս ուսումնառության կատարելագործումը բոլորի համար:

(6) Ֆեյրայի Եվրոպական Խորհուրդը, որը տեղի է ունեցել 2000թ. հունիսին, հրավիրել է անդամ պետություններին, խորհրդին և հանձնաժողովին՝ ցկյանս ուսումնառության խթանման համար հետևողական ռազմավարություններ մշակելու, գործնական միջոցառումներ ձեռնարկելու և այն բոլորին հասանելի դարձնելու նպատակով: Այն վերահաստատվել է Ստոկհոլմի 2001թ. մարտի Եվրոպական Խորհրդի կող-

մից: Նույն պարագայում Ֆեյրայի Եվրոպական հանձնաժողովը շատ անգամ ընդգծել է սոցիալական գործընկերների ներգրավման և հանրային ու մասնավոր ֆինանսավորման ամբողջական ներուժի արդյունավետ կիրառման խթանման անհրաժեշտությունը :

(7) Խորհուրդը (Կրթության) 2001թ. նոյեմբերի 29-ի համաժողովում իր կարծիքն է հայտնել զբաղվածության փաթեթի մասին՝ շեշտը դնելով ցկյանս ուսումնառության դերի վրա՝ որպես հստակ գերակայություն ազգային զբաղվածության քաղաքականություններում:

(8) Ցկյանս ուսումնառության մասին զեկույց է ներկայացվել Միության Կրթության նախարարներին և թեկնածու երկրներին Ռիգայում տեղի ունեցած 2001թ. հունիսի համաժողովում: Նախարարները «Ցկյանս ուսումնառության որակի ցուցանիշների» մասին հետևողական զեկույցի պատրաստման հանձնագիր (մանդատ) են տվել, որը կներկայացվի Բրատիսլավայում 2002թ. հունիսին կայանալիք Կրթության նախարարների համաժողովում:

(9) Խորհրդի՝ «Կրթության և ուսուցման համակարգերի նպատակների» մասին զեկույցի 2001թ. փետրվարի ընդունումը և վերոնշյալ զեկույցի հետևողական կատարման վերաբերյալ սույն տասնամյակի համար նախատեսված աշխատանքային ծրագրի 2002թ. փետրվարի ընդունումը կարևոր քայլ են անդամ պետությունների՝ կրթության և ուսուցման համակարգերի որակի մոդեռնացման և բարելավման ուղղությամբ ստանձնած պարտավորության կատարման համար:

(10) 2002թ. փետրվարի 14-ի խորհրդի (կրթություն, երիտասարդություն) կողմից հաստատված եզրահանգումները դրական կերպով են ընդունել հանձնախմբի՝ «Երիտասարդության համար նոր խթան» պաշտոնական փաստաթղթի առաջարկությունները, որոնք վերաբերում են համայնքի այլ միջոցառումներում, ինչպիսիք են՝ ցկյանս ուսումնառությունը, երիտասարդության հատուկ առումներին առավել մեծ ուշադրություն դարձնելուն:

(11) Բարսելոնի եվրոպական խորհուրդը, որը տե-ղի է ունեցել 2002թ. մարտին, որպես արդյունք իր համոզմունքի, որ ցկյանս ուսումնառությունը Լիսաբոնի ռազմավարության գերակայություն է կազմում, պահանջել է, որ ցկյանս ուսում-նառությանը վերաբերող որոշում ընդունվի նախքան Սևիլիայի եվրոպական խորհրդի կայանալը՝ հաշվի առնելով եվրոպական զբաղվածության ռազմավարությունը:

ՆՇՈՒՄ է, որ չնայած Եվրոպան հղման սկզբունք է շատ ոլորտներում և գաղափարները նորամուծական արդյունքների և ծառայությունների վերափոխելու ունակություն ունի, ցկյանս ուսումնառությունը դեռևս հասանելի չէ շատ քաղաքացիների համար:

ԸՆԴԳԾՈՒՄ է, որ ցկյանս ուսումնառությունը պետք է ընդգրկի նախադպրոցական տարիքից մինչև թոշակի անցնելը՝ ներառյալ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ողջ սպեկտրը: Բացի այդ, ցկյանս ուսումնառությունը պետք է ընկալվի որպես ցկյանս ձեռք բերվող կրթության ողջ գործընթաց, որը նպատակաուղղված է անձնական, քաղաքացիական, սոցիալական և/կամ զբաղվածության հեռանկարում գիտելիքների, հմտությունների և կարողությունների բարելավմանը: Ի վերջո, այս համատեքստի սկզբունքները պետք է լինեն՝ անհատը՝ որպես ուսումնառության առարկան՝ ընդգծելով հնարավորությունների հավասարության և ուսումնառության որակի կարևորությունը:

ԸՆԴԳԾՈՒՄ է երիտասարդության սեկտորի օժանդակության կարևորությունը ցկյանս ուսումնառության մասին գլոբալ և հետևողական ռազմավարություններ մշակելու համար՝ արժևորելով ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառությունը երիտասարդության ոլորտում և սահմանելով գերակայություններ ցկյանս ուսումնառության համար այս համատեքստում:

ԽՐԱԽՈՒՍՈՒՄ է «Ցկյանս ուսումնառության Եվրոպական տարածքի իրագործման» (նոյեմբեր 2001) մասին հանձնաժողովից ստացած հաղորդագրությունը, որը հիմնված է ցկյանս ուսումնառության մասին 2000թ. նոյեմբերի հռչակագրի և այս փաստաթղթի վերաբերյալ ամբողջ Եվրոպայում իրականացված լայնածավալ խորհրդատվությունից ստացված տեղեկատվության վրա: Բացի այդ, խրախուսում է այն փաստը, որ այս հաղորդագրությունը սահմանել է ցկյանս ուսումնառությունը որպես կրթության և ուսուցման ուղղորդող սկզբունքներից մեկը և ճանաչում է ցկյանս ուսումնառության ռազմավարությունների և գերակայությունների կարևորությունը հաղորդագրության մեջ սահմանված գործողությունների համար:

ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ է՝

1. որ պետք է խթանել «Ցկյանս ուսումնառության Եվրոպական տարածքի իրագործման» մասին հանձնաժողովից ստացած հաղորդագրության միավորումը կրթության և ուսուցման համակարգերի հետագա նպատակների մասին աշխատանքային ծրագրի հետ՝ կրթության և ուսուցման համար մշակված համապարփակ և հետևողական ռազմավարության իրագործման նպատակով.
2. որ ցկյանս ուսումնառությունը պետք է ընդլայնել մասնավորապես Եվրոպական զբաղվածության ռազմավարության, հմտությունների և շարժունակության համար մշակված գործողությունների ծրագրի, Սոկրատես, Լեոնարդո Դա Վինչի և Երիտասարդություն ծրագրերի ու էլեկտրոնային ուսումնառության նախաձեռնության շրջանակներում և հետազոտական ու նորամուծական միջոցառումներում մշակված ռազմավարությունների և գործողությունների միջոցով:

ԸՆԴՈՒՆՈՒՄ է, որ գերակայությունը պետք է տալ հետևյալին՝

- ցկյանս ուսումնառության հնարավորությունների, այդ թվում՝ հատուկ միջոցառումների ապահովմանը բոլորի համար, որոնք ուղղված են անբարենպաստ վիճակում գտնվող անձանց, նրանց, ովքեր չեն մասնակցում կրթությանն ու ուսուցմանը, ինչպես նաև միգրանտներին՝ որպես նրանց սոցիալական ինտեգրմա-ը նպաստելու մջջոց.
- հիմնական հմտությունների ձեռք բերման և/կամ կատարելագործման հնարավորությունների ապահովմանը, ներառյալ՝ նոր հիմնական հմտությունները, ինչպես օրինակ՝ ՏՏ հմտություններ, օտար լեզուներ, տեխնոլոգիական մշակույթ, ձեռնարկատիրության և սոցիալական հմտություններ.
- ուսուցմանը, ցկյանս ուսումնառության մշակման համար ուսուցանողների և ուսուցիչների ընդգրկման ու կատարելագործմանը.
- երկրներում և կրթական սեկտորներում ֆորմալ որակավորումների, ինչպես նաև ոչֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունավետ ճանաչմանն ու վավերականացմանը՝ թափանցիկության բարձրացման և բարձր որակի ապահովման մջջոցով.
- թիրախային խմբերի համար ցկյանս ուսումնառության հնարավորություններին և նրանց շահերին վերաբերող բարձրորակ և առավել մատչելի տեղեկատվության, մասնագիտական կողմնորոշման ու խորհրդատվության ապահովմանը.
- համապատասխան սեկտորների, այդ թվում՝ երիտասարդության սեկտորի՝ սույն ոլորտում գործող առկա և ապագա ցանցերում և կառույցներում ներկայացման խարխուսմանը:

ԿՈՉ է ԱՆՈՒՄ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ՝

1. մշակել և իրագործել համապարփակ և հետևողական ռազմավարություններ՝ արտացոլելով հանձնաժողովի հաղորդագրության մեջ սահմանված սկզբունքներն ու ստորին

օղակները և ներգրավելով համապատասխան դերակատարներին, մասնավորապես՝ սոցիալական գործընկերներին, քաղքացիական հասարակությանը, տեղական և տարածաշրջանային իշխանություններին:

2. Եվրոպական զբաղվածության ռազմավարության առնչությամբ մոբիլիզացնել ռեսուրսները նման ռազմավարությունների համար և խթանել ցկյանս ուսումնառությունը բոլորի համար՝

- սահմանելով նպատակներ մարդկային ռեսուրսների, այդ թվում՝ ցկյանս ուսումնառության մեջ ներդրումների ավելացման և առկա ռեսուրսների արդյունավետ կիրառման համար,
- մշակելով միջոցառումներ ուսումնառության մեջ մասնավոր ներդրումները խթանելու համար,
- համայնքի ֆինանսավորման ռեսուրսների առավել նպատակային կիրառում, ներառյալ՝ Եվրոպական ներդրումների բանկը:

3. Խթանել ուսումնառությունը աշխատավայրում՝ կրթության և ուսուցման հաստատությունների և սոցիալական գործընկերների հետ համագործակցությամբ:

4. Բարելավել ցկյանս ուսումնառության մեջ ներգրավված ուսուցիչների և ուսուցանողների կրթությունն ու ուսուցումը, որպեսզի նրանք ձեռք բերեն գիտելիքի հասարակության համար անհրաժեշտ ուսուցման հքտությունները՝ այսպիսով, ի թիվս այլոց, խթանելով լեզուների ուսումնառությունը, ՏՀՏ-ների մատչելիությունը բոլորի համար և բարձրացված մասնակցությունը գիտական և տեխնիկական ուսումնասիրություններին:

5. Խրախուսել համագործակցությունը և արդյունավետ միջոցառումները, որոնք ուղղված են ուսումնառության արդյունքների վավերակացմանը և վճռորոշ են ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության միջև կամուրջ կառուցելու համար, ինչպես նաև նախադրյալ են ցկյանս ուսումնառության եվրոպական տարածք ստեղծելու համար:

6. Թիրախային խմբերի համար մշակել հատուկ տեղեկատվություն, մասնագիտական կողմնորոշում և խորհրդատվություն՝ ներառյալ կրթության և ուսուցման ու աշխատանքի հնարավորությունների մասին տեղեկատվության մատչելիության համար համապատասխան գործիքների ապահովումը:

7. Մշակել ռազմավարություններ գիտելիքի հասարակությունից բացառված խմբերի մասնակցությունը խթանելու և բարձրացնելու համար՝ որպես ցածր հիմնական որակավորման մակարդակների արդյունք:

8. Բարելավել ակտիվ մասնակցությունը ցկյանս ուսումնառությանը՝ ընդգրկելով երիտասարդներին:

ԿՈՉ է ԱՆՈՒՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ՝

1. Խորհրդի հետ սերտ համագործակցությամբ և միասնական ու համամետ ձևով խթանել և համակարգել գործողությունները, որոնք առաջանում են կրթության և ուսուցման համակարգերի հետագա նպատակների մասին աշխատանքային ծրագրի միջոցով «Ցկյանս ուսումնառության Եվրոպական տարածքի իրագործման» մասին հանձնաժողովի հաղորդագրության և համայնքի կրթության և ուսուցման փաստաթղթերի ու եվրոպական զբաղվածության ռազմավարության արդյունքում:

2. Խրախուսել որակի խթանիչներն ու լավագույն փորձի փոխանակումը՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության մեջ ներառված բոլոր սեկտորներում արդյունավետ կատարողականությունը խթանելու համար՝ ցկյանս ուսումնառության ոլորտի լավագույն փորձերի մասին եվրոպական տվյալների բազա ստեղծելու միջոցով:

3. Խորհրդի և անդամ պետությունների հետ սերտ համագործակցությամբ խթանել ընդ-լայնված համագործակցությունը որակի ապահովման և թափանցիկության խնդիրների վրա հիմնված կրթության և ուսուցման մեջ՝ որակավորումների ճանաչման համար շրջանակ մշակելու նպատակով՝ Բոլոնիայի գործընթացի հաջողությունների վրա հիմնվելու և մասնագիտական ուսուցման բնագավառում համանման գործողությունները խթանելու միջոցով: Նման համագործակցությունը պետք է ապահովի սոցիալական գործընկերների, մասնագիտական և կրթական հաստատությունների և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությունը:

4. Խթանել թիրախային խմբերի հատուկ տեղեկատվության ու մասնագիտական կողմնորոշման միջոցառումները, որոնք ուղղված են ամբողջ Եվրոպայում ուսումնառության և աշխատանքի համար հնարավորությունների մասին իրազեկության բարձրացմանը:

5. Խթանել թեկնածու երկրների մասնակցությունը ցկյանս ուսումնառության ռազմավարությունների մշակման գործում:

6. Ընդլայնել համագործակցությունը համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ, ինչպիսիք են՝ Եվրոպական Խորհուրդը, ՏՀԶԿ-ն (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն) և Յունեսկօն, ցկյանս ուսումնառության քաղաքականությունների և կոնկրետ գործողությունների մշակման գործում:

7. Անդամ պետությունների հետ համագործակցությամբ պատրաստել առաջընթացի զեկույց Հաղորդագրությունների հետագա նպատակների և սույն որոշման մասին նախքան 2004թ. գարնան եվրոպական խորհրդի կայանալը:

ԿՈՉ Է ԱՆՈՒՄ՝

անդամ պետություններին և հանձնաժողովին՝ առաջարկել կոնկրետ գործողություններ սույն Որոշման բովանդակության իրագործման համար՝ բոլոր առանցքային դերակատարների միջև և պայմանագրի շրջանակներում համագործակցությունը խթանելու միջոցով: